

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ-վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան:

- **ԵՐԿԻՐ /ՔԱՂԱՔ / ԺԱՄԿԵՏ**

Սերբիայի Հանրապետություն, Բելգրադ 30.03 - 06.04.2023թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակի հրավերով «Բազմացուցանիշային կլաստերային հետազոտության (MICS) նկարագիր. 7-րդ փուլ» թեմայով աշխատանքային հանդիպմանը:

Ծանոթանալ «Բազմացուցանիշային կլաստերային հետազոտության (MICS) նկարագիր. 7-րդ փուլ» թեմայով հետազոտության նոր գործիքակազմին և չափորոշիչներին, տեղեկանալ, թե ինչպես են հավաքագրվում բարեկեցությունը բնութագրող ցուցանիշները՝ միջազգային մեթոդաբանությանը համապատասխան: Հանդիպման առաջնային նպատակն էր աջակցել մասնակից երկրներին տվյալների հավաքագրման գործընթացում՝ բնակչության առողջության ծրագրերը վերահսկելու և հիմնական ցուցանիշների վերաբերյալ թարմացված գնահատականներ ապահովելու գործում: «Բազմացուցանիշային կլաստերային հետազոտության (MICS) նկարագիր. 7-րդ փուլ»-ը տնային տնտեսությունների հետազոտության միջազգային ծրագիր է, որը մշակվել և պահպանվում է ՅՈՒՆԻՍԵՖ - ի կողմից: MICS-ը նախատեսված է հավաքել հիմնական ցուցանիշների գնահատականներ, որոնք օգտագործվում են երեխաների և կանանց դիրքերը գնահատելու համար: Վերջին երեք տասնամյակների ընթացքում MICS-ը զարգացել է՝ արձագանքելով տվյալների փոփոխվող կարիքներին՝ ընդլայնվելով առաջին փուլի 28 ցուցանիշից մինչև ընթացիկ յոթերորդ փուլի ավելի քան 250 ցուցանիշ և դարձել է երեխաների պաշտպանության, վաղ տարիքի կրթության, ինչպես նաև երեխաների առողջության և շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալների հիմնական աղբյուր: Բացի այն, որ MICS-ը տվյալների հավաքագրման գործիք է երեխաների բարեկեցության բարելավմանն ուղղված ազգային նպատակների և գլոբալ պարտավորությունների առաջընթացը վերահսկելու համար, նաև այն տրամադրում է արժեքավոր տվյալներ Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) մոնիտորինգի համար: MICS-ը նաև տրամադրում է տվյալների հավաքագրման անյախսի գործիքներ, որոնք օգնում են բարելավել երեխաների բարեկեցությունը և սնունդը: 1990-ականներին՝ MICS-ի ստեղծումից ի վեր, 118 երկրում իրականացվել է ավելի քան 350 հետազոտություն: Բարձրորակ և մասնատված տվյալների հավաքագրման և վերլուծության ոլորտում ազգային կարողությունների հետագա զարգացման գլոբալ ջանքերի շրջանակներում ՅՈՒՆԻՍԵՖ-ը 2023 թվականին սկսել է ռազմարդյունաբերական համալիրի

հետազոտությունների յոթերորդ փուլը, որի առաջին արդյունքները ակնկալվում է ստանալ մինչև 2023 թվականի վերջ: Այսօր MICS7-ն ունի բոլոր հնարավորությունները կենտրոնական դեր խաղալու Կայուն զարգացման օրակարգի տեղեկատվական տարածքում մինչև 2030 թվականը, ժողովրդագրական, առողջապահական և սոցիալ-տնտեսական այլ հիմնական հետազոտությունների հետ միասին և լրացնելու վարչական աղբյուրներից և մարդահամարներից ստացված տվյալները: MICS-ը նաև տրամադրում է տեղեկատվություն, որը կարող է օգնել բարելավել Կայուն զարգացման օրակարգը: MICS-ն արդեն ծածկել է ԿԶՆ-ի որոշ ցուցանիշներ՝ հիմնված տնային տնտեսությունների հետազոտությունների վրա: Մանրակրկիտ մեթոդաբանական աշխատանքներից և վավերացումներից հետո, որոնք ուղղված են գործիքների շրջանակի ընդլայնմանը և ներառում են բազմաթիվ թեմաներ, որոնք արտացոլում են ԿԶՆ-ները և առաջացող խնդիրները մինչև 2030թ. Կայուն զարգացման օրակարգի համատեքստում, MICS7 հարցաթերթիկները նոր փուլում կներառեն տնային տնտեսությունների հետազոտությունների վրա հիմնված ԿԶՆ-ների ցուցանիշների մոտ մեկ երրորդը:

• ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդիպման ընթացքում մասնակիցները ծանոթացան պլանշետների միջոցով իրականացվող արձանագրությունների, ստանդարտների և հետազոտական տվյալների հավաքագրման համար նախատեսված նոր մոտեցմանը: Մասնակիցների կողմից քննարկումներ ծավալվեցին բազմացուցանիշային կլաստերային հետազոտության մոդուլների և ընտրանքի կառուցման վերաբերյալ, որոնք կնպաստեն երեխաների հետ կապված առավել հասանելի և որակյալ տեղեկատվության հավաքագրմանը:

Հանդիպման ընթացքում քննարկված թեմաները ներկայացված են ստորև:

Այցի առաջին օրը՝ 2023թ-ի մարտի 30-ին

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցչի կողմից ներկայացվեց բազմացուցանիշային կլաստերային հետազոտության տվյալների հավաքագրման առանձնահատկությունների, ընտրանքի մշակման, նախաթեստավորման, դաշտային աշխատակազմի հրահանգավորման, դաշտային աշխատանքների և հետազոտության հիմնական արդյունքների վերաբերյալ շնորհանդես: Տեղի ունեցան բաց քննարկումներ, որտեղ հետազոտությանը մասնակցած երկրների ներկայացուցիչները հայտնեցին իրենց կարծիքները հետազոտության ընթացքի վերաբերյալ, ներկայացրեցին նաև իրենց երկրների մակարդակով որոշ ցուցանիշներ:

Այցի երկրորդ օրը՝ 2023թ-ի մարտի 31-ին

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետը ներկայացրեց ընտրանքի ձևավորման փուլերի, չափի, կշռի գործոնների, կլաստերներում տնային տնտեսությունների ընդգրկվածության և ազգային մակարդակով արդյունքների ներկայացուցչականության վերաբերյալ շնորհանդես:

Այցի երրորդ օրը՝ 2023թ-ի ապրիլի 1-ին

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետը ներկայացրեց Բազմացուցանիշային կլաստերային հետազոտության տնային տնտեսության հարցաթերթը: Քննարկվեցին և տրվեցին մի շարք հետաքրքրող հարցերի պարզաբանումներ: Այնուհետև ներկայացվեց

խմելու ջրի որակի վերլուծության հարցաթերթը և մասնակիցներին ցույց տրվեց, թե ինչ գործիքով և ինչպես է որոշվում խմելու ջրի որակը:

Այցի չորրորդ օրը՝ 2023թ-ի ապրիլի 3-ին

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետը ներկայացրեց կանանց և տղամարդկանց անհատական հարցաթերթը՝ նախատեսված 15-49 տարեկանների համար: Մասնակիցները ներկայացրեցին իրենց փորձն ու առաջարկությունները և քննարկեցին հարցաթերթում ներգրավված նոր հարցերը:

Այցի հինգերորդ օրը՝ 2023թ-ի ապրիլի 4-ին

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետը ներկայացրեց 0-5 և 5-9 տարեկան երեխաների վերաբերյալ հարցաթերթը, որից հետո քննարկվեցին հետաքրքրող հարցերը: Ներկայացվեց նաև ստացված տվյալների վերահսկման գործընթացը:

Այցի վեցերորդ օրը՝ 2023թ-ի ապրիլի 5-ին

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետը ներկայացրեց 5-17 տարեկան երեխաների վերաբերյալ հարցաթերթը՝ յուրաքանչյուր ընտանիքում պատահականորեն ընտրված մեկ երեխայի համար: Այնուհետև ներկայացվեց «Բազմացուցանիշային կլաստերային հետազոտության տվյալների վերլուծություն, մշակում և որակ» թեմայով շնորհանդես: Այնուհետև մասնակիցների և փորձագետների հետ տեղի ունեցան քննարկումներ անհրաժեշտ տվյալների հավաքման, մշակման և վերլուծության վերաբերյալ:

Այցի յոթերորդ օրը՝ 2023թ-ի ապրիլի 6-ին

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետները ներկայացրեցին «Հարցման արդյունքների հաշվետվություն, վիճակագրական պատկերներ և տարածում» թեմայով շնորհանդես:

Ամփոփվեցին հանդիպման արդյունքները: Աշխատանքային հանդիպման վերջում յուրաքանչյուր երկրի մասնակից, շնորհանդեսի միջոցով ներկայացրեց հետազոտության ծրագիր՝ հետագայում իր երկրում քննարկելու և իրագործելու նպատակով:

• ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այցը հնարավորություն ընձեռեց ծանոթանալ տարբեր երկրներում պլանշետների օգնությամբ իրականացված բազմացուցանիշային կլաստերային հետազոտության անցկացման փորձին և տվյալների վերլուծությանը: «Բազմացուցանիշային կլաստերային հետազոտության (MICS) նկարագիր. 7-րդ փուլ» թեմայով աշխատանքային հանդիպման շրջանակներում հավաքագրված տեղեկությունները կօժանդակեն քաղաքականություն մշակողներին և ծրագրերի ղեկավարներին՝ մշակելու երկրի բնակչության առողջության բարելավմանն ուղղված ծրագրեր և ռազմավարություն: Մասնակից երկրների ներկայացուցիչների հետ մանրամասն քննարկվեցին հետազոտության առանձնահատկությունները, խնդիրները, տվյալների հավաքման որակը և հետազոտության անցկացման ժամկետները:

• ՆՇՈՒՄՆԵՐ

Հանդիպմանը մասնակցում էին Ալբանիայի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Մոնտենեգրոյի, Հյուսիսային Մակեդոնիայի, Ռումինիայի,

Սերբիայի, Թուրքիայի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի վիճակագրական գրասենյակների ներկայացուցիչներ:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ-
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ



Գ. Գևորգյան